

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԵՐԷՆՍԻ», աշխատասիրությամբ Գ. Վ. Արզախյանի,
Երևան, 1979, թ., 447 էջ:

Ձեռագրերով շահմանավորվող ամեն մի ընթերցում բնագիր մուծելը դարավոր ավանդույթի վերագնահատություն լինելուց բացի՝ գալիք գիտական սերունդներին կողմնորոշել է նշանակում: Եվ պատահական չէ, որ նրա տարիներ առաջ լույս տեսավ բանասեր-հայագետ Գևորգ Արզախյանի «Սերբոսի Պատմությունը և Անանունի առեղծվածը» մենագրությունը, ուր փաստորեն մշակվում էին բնագրի ապագա հրատարակության սկզբունքներն ու կովանները, հայագետների շրջանում մի տեսակ անհանգստություն սկսվեց: Տասնամյակներ «Սերբոսի Պատմությամբ» զբաղված գիտնականը, սակայն, անակնկալի չեկավ և բնագրագետին վայել հանգստությամբ ու մտացիությամբ ծանրութեթև արեց արձագանքները, վերստուգեց իր եզրակացությունների հիմնավորությունը, վերանայեց ենթադրական դրույթները և, մեկ տասնամյակ ևս ձեռագրեր պրպտելով, մեջտեղ բերեց գրախոսվող «Պատմություն Սերբոսի»-ն:

«Պատմություն Սերբոսի»-ն նշանակալիորեն տարբերվում է նախորդ շրջանի պատմագրության արդյունքներից թե՛ ընտրած նյութի աշխարհագրական ընդգրկմամբ, և թե՛ հետապնդած նպատակով: Ինչպես երևում է, VII դարի իրադարձությունները այլևս քաղաքական անկախության ու ազգային պետականության վերաստեղծման երաշխիքներ չէին ապահովում, և Փարպեցուց հետո պատմական մատենագրությունը աստիճանաբար նվազում էր դառնում՝ առանց խնդիրների արծարծումը զիջելով եկեղեցական պատմագրական գրականությանը: VII դարի առաջին տասնամյակներում կազմված «Գիրք թղթոց» և «Կնիք հաւատոյ» ժողովածուները ևս պատմագրական երկեր էին, բայց արդեն դավանական պատմության ընդգրծմամբ: Երբեմնի «Հայոց պատմությանը» փոխարինելու էին գալիս նախարարական առանձին տների պատմությունները, որոնցից մեկը «Պատմություն Կամսարականաց» երկն է,

որի գոյության մասին հավաստի գիտենք, բայց և որի արձագանքները դիտելի չեն հետագա մատենագիրների շարադրանքներում: Պարսկաբյուզանդական հակասությունների ոլորտում Հայաստանի քաղաքական կողմնորոշումն արտահայտվում էր նաև դավանական գիրքորոշմամբ, ուստի էթնոքաղաքական ընդհանրական պատմագրությանը փոխարինելու էր գալիս եկեղեցական ընդհանրականության գաղափարը՝ ազգային ամբողջականություն նշանավորելու: Դրա արտահայտություններից են շարակնոցների, ճառընտիրների, հայամավորքների, ժամագրքերի և այլ ժողովածուների կազմավորումը, պաշտամունքային կառույցների արտասովոր սովորացումը, նոր տիպերի առաջացումն ու նրանց զարմանալի արագ թափանցումը մեկ զավառից մյուսը: Պակաս աշխուժացում չէր ապրում և եկեղեցական պատմագրությունը: Սովորաբար Պատմության թարգմանությունը արդյունքն էր այն տեղաշարժերի, որ տեղի էին ունենում հայ իրականության մեջ՝ դավանական կողմնորոշումների անհրաժեշտության բարդ պարագաներում:

Ինչ խոսք, պատմագրության նվազումը քաղաքական կացության նկատմամբ անտարբերություն կամ անմասնություն չէր նշանակում, բայց և չկար պատմագրելով ազգային խնդիրներին պատասխան որոնելու նախկին վստահությունը: Արաբական արշավանքները, սակայն, երբ «յանկարծարեն շարժեցան բանակքն իսմայելի, և ի վայրկեան ժամանակի վանելով զգարութիւն թագաւորացն երկոցունց (իմա պարսից և բյուզանդացիներին—Պ. Մ.)՝ կալան յնգիպտոսէ մինչև յայսկոյս գետոյն մեծի Եփրատայ և ցահման Հայաստանեայց...», հայոց մատենագիրներին ստիպեցին նորից հայացքն ուղղել դեպի երկրի քաղաքական պատմությունը: Ընդամենը՝ այժմ նրանց տեսադաշտում միայն Հայաստանը չէր, այլ ողջ այն տա-

րածրը, որ ընկած էր «յեզրէ ծովուն մեծի Արևմտից մինչև ի դուռն թագաւորութեանն Պարսից»։ Այլ խոսքով՝ «Սեբեոսի Պատմութեան» հեղինակը, Գ. Արգարյանի արդարացի բնութագրմամբ, «գրել է ոչ թե հայոց, այլ՝ իր մերձակա ժամանակի ընդհանուր պատմութիւնը», թեև այդ «պատմութիւնը շարադրել է հայկական հողի վրա, որպես հայ պատմիչ, լրացնելու համար իր նկատած բացը մեր պատմագրութեան մեջ» (էջ 6)։ Այստեղ անհրաժեշտ ենք համարում մի մասնավորեցում կատարել. «Սեբեոսի Պատմութեան» հեղինակը թվարկում է այն իրադարձութիւնները, որ «կամեցայ ի ձեռն գրոյս այսորիկ կարճաւոտիւ ձեզ վիպասանել», բայց չի հանդիմանում նախորդներին՝ «իր նկատած բացի» համար։ Արդ, հիրավի, եթե նրանից առաջ եղել է «Սեբիոս» կամ «Եւսեբիոս» անունով մի պատմիչ, որը պատմագրել է Հերակլի շրջանը (VII դարի 10-ից 40-ական թթ), ապա նշանակալի չափով նա «երկրորդում է» այդ պատմութիւնը, ուստի և հանդիմանելու առիթ չունի։

Գ. Արգարյանը տեական ու տքնաջան աշխատանք է կատարել ցույց տալու համար, որ «Սեբեոսի Պատմութեան» հեղինակը հետագա մատենագիրների երկերից հայտնի Սեբեիոս-Եւսեբիոսը չէ, բայց չի փաստարկել, թե բնագրական ինչ առնչակցութեան մեջ պիտի լինեին այդ երկու երկերը՝ եթե նրանց հեղինակները տարբեր են։ «Սեբեոսի Պատմութեան» հեղինակը ծանոթ չէ՞ր իրենից մեկ-երկու տասնամյակ առաջ գրված «Պատմութիւն ի Հերակլ» երկին, իսկ եթե ծանոթ էր ու քաղում էր նրանից՝ ինչու է լուում։ Այս խնդիրը ինչպես էլ լուծվի՝ «Սեբեոսի Պատմութիւնը» առանձնակի կարևորություն ներկայացնող հուշարձան է, որի ընդգրկած ժամանակահատվածը մասամբ է միայն արտացոլված բյուզանդական ու ասորական մատենագրութեան մեջ, իսկ իրանական ու վրացական պատմական աղբյուրներն իսպառ բացակայում են։ Նշանակում է՝ «Սեբեոսի Պատմութեամբ» է հետազոտվելու և հարևան երկրների պատմութեան այդ դրվագը, ուստի հուշարձանն արժանացել է արևելագիտական լայն շրջանների ուշադրութեանը, հատկաժան և ամբողջական մի քանի թարգմանութիւնների ենթարկվելով։ Հայերեն ընդգրկումն ունեցել է չորս նախորդ հրատարակութիւն՝ վաստակաշատ բնագրագետներ Թ. Միհրդատյանի, Ք. Պատկանյանի և Ստ. Մալխասյանցի աշխատասիրութեամբ։

Թվում է՝ նոր հրատարակութեան անհրաժեշտութիւնը մեծ չպետք է լիներ, որովհետև Ստ. Մալխասյանցի սրազդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջարանի և ծանօթա-

գրութեամբ» հրատարակումը կատարված է 1939 թ., մինչդեռ այսօր դեռ գոհացնում են դարասկզբին լույս տեսած Ազաթանգեղոսի, Խորենացու և Փարպեցու երկերի հրատարակութիւնները, մասամբ դարձյալ «ի ձեռն» նույն Ստ. Մալխասյանցի Ամբողջ խնդիրն այն է, որ «Սեբեոսի Պատմութիւնը» ավանդված է ուշ շրջանի (հնագույնը 1672 թ. Մաշտոցի անվ. Մատենադարան, № 2639) և բավականաչափ սակավաթիվ (9 ամբողջական և 5 հատվածական) ձեռագրերով, մի նշանակալի մասը՝ XIX դարի ու նույն օրինակից սերող։ Հենց այստեղ նշենք, որ Ստ. Մալխասյանցը ձեռքի տակ ունեցել է հինգ ձեռագիր ու նախորդ հրատարակութիւնները, մինչդեռ Գ. Արգարյանը տարիներ իր պրպտումների շնորհիվ գրիթե կրկնապատկել է դրանք, թեև դա չէ նոր հրատարակութեան հիմնական նորութիւնը։ Գ. Արգարյանը ձեռնամուխ է եղել վերականգնված ու սրբազրված բնագրի հրատարակութեան՝ ընդունելով ու մեկ առ մեկ ստուգելով նախորդ հայագետների (Թ. Միհրդատյան, Ք. Պատկանյան, Ստ. Մալխասյանց, Ա. Զամինյան, Պ. Անանյան, Մ. Գրիգորյան) առաջարկած մի քանի տասնյակի հասնող բնագրական վերականգնումները, բայց և պատկառելի քանակութեան նոր սրբագրումներ ու վերականգնումներ ունենալով։ Ուրեմն՝ Գ. Արգարյանի բնագրագիտական աշխատանքն ունեցել է երեք փուլ. ա) բուն ձեռագրերի համեմատութիւն միմյանց ու եղած հրատարակութիւնների հետ, որի ընթացքում ընթերցումները խմբավորվել են, իսկ հրատարակութիւնների մեջ եղած սրբագրումներն ու վրիպումները՝ բացահայտվել։ Բ) Հրատարակութիւնների, թարգմանութիւնների և հայագիտական գրականութեան մեջ եղած «սեբեոսագիտական» բանասիրական-բնագրագիտական բնութիւնների արդյունքների ամփոփում՝ ընդունելին բնութելու և առարկելին մերժելու համար։ Գ) Բնագրի կազմում՝ սեփական ու այլոց առաջարկած փոփոխութիւնների բնագիր մուծումով, բայց միշտ հեղինակի ասելիքը ճիշտ կռահելու, ոճն ու պատմելիաձևը անխաթար պահելու և միջամտութիւնը սլատճառարանելու մտահոգութեամբ։ Սա ըստ ամենայնի ծանր, գայթակղումների վտանգ բովանդակող և մեծ հմտութիւն պահանջող աշխատանք է։

Երկու-երեք տասնամյակի տքնութեամբ Գ. Արգարյանը հրապարակ է բերել մի այնպիսի բնագիր, որի 140 տարնթերցումավոր էջերը օժտված են 179 էջ մանրատառ ծանոթագրութիւններով։ Հարցը թվարանականը չէ, այլ «Սեբեոսի Պատմութեան» բնագրի հետ կապված խնդիրների ի մի ամփոփումն ու քննութիւնը՝ ժամանակակից բանասիրութեան բազ-

մազան հարցադրումներին մասնագիտական պատասխան տալու կարողությամբ:

Հրատարակիչը նշանակալիորեն թեթևացրել է գրքի գրախոսի ու քննադատի գործը՝ «Ներկա հրատարակության հանգամանքները» ներածական բաժնում կետ առ կետ ներկայացնելով իր կատարած աշխատանքի բնութագրությունը (էջ 7—11): Կարևոր ենք նկատում այդ թվարկումներից հատկապես մեկը. «Ուղղված են ձեռագրերում աղճատված և նույն վիճակում տպագրված բազմաթիվ հատվածներ: Նոր ձեռագրերի հիման վրա վերականգնված են նախնական բնագրում եղած մի շարք միավորներ, որոնք առաջին անգամ են հրատարակվում «Սերբոսի Պատմության» կազմում: Մեզ հասած ձեռագրերում իր տեղը կորցրած հեղինակային վերջաբանը սույն հրատարակության մեջ տպագրված է առաջին անգամ իսկական տեղում»: Եթե թվարկածին գումարենք ձեռագրական նոր միավորների ընդհանուր նյութը, տարբերությունների նորովի ընտրությունը, գիտակարգման վերանայումը և երկուսի ավելացումը, խորագրերի մեջ եղած ճշգրտումները, VII դարի լեզվական նորմերին մերձեցնելու ձգտումը և այլն, ապա դժվար չի լինի ընկալել այս հրատարակության անհրաժեշտությունը և ինքնատիպությունը: Մասնավորապես վերջինիս թվին են պատկանում հավելվածական ութ գույները, որոնք նպատակ ունեն թե՛ փաստելու Ե. Աբգարյանի բնագրագիտական հետևությունները, և թե՛ նոր քննությունների նյութ ծառայելու Առաջին երկու հավելվածները «Սերբոսի Պատմության» և Անանունի հեղինակային պատկանելության խնդիրներն են արժարժում, ուստի կարող էին և «Հարկվածից» «Առաջաբան» տեղափոխվել, մինչդեռ մնացած վեցը բնագրեր են ու շատ կարևոր, որոնք հիրավի պիտի ուղեկցեն «Սերբոսի Պատմությանը» այնքան ժամանակ, մինչև որ ձեռագրական մի բարեպատեհ հայտնաբերումով երևան կգա եթե ոչ ավելի վաղ շրջանի, ապա գոնե Ք. Միհրդատյանի ձեռքի տակ եղած և այսօր կորած համարվող հնագույն գրչագիրը:

«Մանթագրություններ» բաժինը, ինչպես արդեն ասացինք, կոչված է պատճառարանելու առաջարկվող սրբագրությունները և կամ մերժելու դրանց անհրաժեշտությունը՝ եթե այդպիսի առաջարկվել են նախորդ հետազոտողների կողմից, բայց այժմ չեն արդարանում: Արգարացի է վարվել Գ. Աբգարյանը՝ ծանոթագրվող բնագրական հատվածը շղատառ կրկնելով այս օժանդակ, որով հեշտությամբ կարելի է վերահասու լինել, թե խոսքը ինչի մասին է (ափսոս, որ բնագրի էջի հակադարձ հղում չի կատարել): Թեև 671 ծանոթագրությունը ինք-
18 Հանդես, № 1

նին մի առանձին աշխատություն է, այնուամենայնիվ նկատելի է, որ հեղինակը աշխատում է կարելույն չափ համառոտաբան լինել, առ այդ օգտագործելով հղումների բավականաչափ պարզեցված համակարգ: Պիտի ափսոսալ միայն համառոտագրությունների ցանկերի բացակայության համար: Ծանոթագրություններից շատերը «Սերբոսի Պատմության» առիթով գրված պատմաբանասիրական ամփոփ և մատենագրության պատմության այլ խնդիրների կապակցությամբ ևս նպաստ բերող հետազոտություններ են: Հատկապես նշանակալի են այն դեպքերը, երբ «Սերբոսի Պատմության» որևէ հատված կամ արտահայտություն Գ. Աբգարյանը վերծանում է նույն երկի այլ դրվագներում եղած միավորների օժանդակությամբ, իսկ այդպիսիք շատնելու դեպքում՝ մատենագրական ինքնուրույն կամ թարգմանական այլ երկերի է դիմում: Որոշ դեպքերում, իհարկե, դրան նպաստում են «Նոր բառգիրքն» ու եղած համարաբանները, բայց և քիչ չեն ուղղակի բնագրերի ճանաչմամբ կատարված վկայակոչությունները: «Սերբոսի Պատմության» բնագրում ավանդված «Գիտնոս Եփեսոսեայս» ընթերցումը շատերին է մտահոգել, բայց միայն Ե. Աբգարյանին է հաջողվել լուծել առեղծվածը. այն Հիպոլիտոսի ժամանակագրության «Գիմնոսոփեսոսեայս» (մերկիմաստը) տերմինի ազգագրությունն է (էջ 265—267, ծան. 305): Բնագրի եւզ գլխում պատմվում է հայերի, աղվանների ու վրացիների «ի ծառայութիւն Իսմայելացոց» մտնելու և Կոստանդին կայսեր «ի Հայս» գալու մասին: Վերջինիս ընդդիմացողների մեջ են աղվանները, սյունիկները, Սեպհական գունդը և վրացիները: Գլխի վերջում ասվում է, որ «Աղուանն և Սիւնիւն և գունդն Սեպհական ոչ հնազանգեցան» (էջ 166), իսկ թե ինչ կատարվեց վրացիների հետ՝ մնում է անհայտ: Թագ. Ավդայրեգյանը ժամանակին նկատել է այս բացը և առաջարկել գլխի նախավերջին նախադասության մեջ ավելացնել «Վիրք» բառը: Գ. Աբգարյանը ընդունել և բնագիր է մուծել «Վիրքը», բայց ոչ թե իբրև ավելացում, այլ անհարկի գործածված «իսկ»-ի սրբագրություն, որով բնագիրը դարձել է այսպիսին. «Վիրք թէպէտ առ ժամանակ մի ոչ կամեցան հնազանգել (կարդա՛ հնազանգիլ—Պ. Մ.) սակայն յետոյ նուաճեալ ի ծառայութիւն»: Սրբագրությունը որքան տեղին է ու պատճառարանված, նույնքան էլ նշանակալի է:

Հստակությունն ի շահ՝ Գ. Աբգարյանը երբեմն նույնիսկ դիմում է վերծանված բնագրի աշխարհաբար թարգմանության, դրանով իսկ մեծապես օգնում է թե՛ առօրյա գործածողին

և թե՛ երկի ապագա թարգմանիչներին: Եթե ծանոթագրութիւններին վերաբերող առանձին անվանական ու առարկայական ցանկեր կազմվեին, ապա նրանցում եղած նորութիւնները առավել հեշտութեամբ կարող էին գիտական շրջանառութեան մեջ մտնել: Հայագետ Գ. Արզարյանի թագմամյա մանրակրկիտ պատմաբանասիրական և աղբյուրագիտական աշխատանքի շնորհիվ «Սերեոսի Պատմութեան» հետ կապված խնդիրների ուսումնասիրութիւնը հասցված է մի այնպիսի աստիճանի, որ այլևս «ավանդական տեսակետներ» պաշտպանութիւնը անկարելի է դառնում. իսկ ինչ վերաբերում է սույն հրատարակութեամբ բացվող հեռանկարներին, ապա համոզված ենք, որ շատ հարցադրումներ պիտի արժանանան գալիք գիտական սերնդի ուղղորդմանը՝ մղելով նոր պրպտումների: Վիճարկելի խնդիրներ ու սրբագրելի տեղիներ, ի՞նչպէս, այսօր էլ կան, բայց դրանք հիմնականում պայմանավորված են բնագրի ավանդված վիճակով և ոչ հետազոտողի որդեգրած մեթոդով: Ահա, օրինակ, դրանցից մի քանիսը.

1. Ք. Պատկանյանից սկսած հայագիտութեան մեջ համոզմունք կար, որ «Սերեոսի Պատմութեան» սկզբի մասը (Գ. Արզարյանի հրատարակութեան Ա—Ձ գլուխները) Ասողիկից հետո է գրվել և Անանուն ժամանակագրի ինքնուրույն գործ է: Գ. Արզարյանը այդ հաստատող բազմաթիվ նոր կովաններ է բերում ծանոթագրութիւնների բաժնում ու երկրորդ հավելվածում և, այնուամենայնիվ, «քանի որ երկու երկերն էլ մեզ են հասել միևնույն ձեռագրի կազմում, մենք հրատարակում ենք միասին» (էջ 390): Այս պատճառաբանութիւնը ամենևին հիմնավոր չէ և միանգամայն խորթ է բնագրագետ Գ. Արզարյանի դավանած սկզբունքին: Եթե ձեռագրական ավանդույթը պարտավորեցնող պարագա էր, ապա կարելի էր Անանունի երկը հրատարակել իբրև հավելված, դրանով իսկ «Սերեոսի Պատմութեան» գլխաբաժանումը զեթ մասամբ կկարգավորվեր, իսկ նրա նախադրութիւնը ընթերցողի համար ճանաչելի կդառնար: «Սերեոսի Պատմութեան» հեղինակի անվան կորուստի հիմնական պատճառը հենց Անանունի երկի համակցումն է կղել (հիշենք «Քարթլիս ցխովրեբայի» մեջ մտնող շատ գործերի անհեղինակութեան հանգամանքը): Անանունի առանձնացումը հնարավորութեան կտար առավել ճանաչելի դարձնելու հենց այդ երկը, որի տեղը XI—XII դդ. պատմագրութեան մեջ դեռ չի որոշված: Աղբյուրագիտական առումով ևս այն դեռ պահանջվելիք քննութեան չի ենթարկված: Ի դեպ, Գ. Արզարյանը հիմնավորապես ապացուցում է, որ Ք. Միհրատյանի ձեռքին եղած և այժմ կորած հնագույն ձեռագրի ճակատին «Պատմա-

գիրք Սերեոսի ի Հերակլոս» դրոշմված լինել չէր կարող: Պետք էր նաև ավելացնել, որ եթե նման խորագիր լիներ Անանունից հետո, ապա հրատարակիչը երկու տարբեր հուշարձանները մեկ միավոր դիտել չէր կարող, իսկ եթե այն եղել է Անանունի սկզբում, ապա պարզապես թյուրիմացութեան արդյունք է, որովհետև այն առնչութիւն շունի «Հերակլի Պատմութեան» հետ: Պիտի ախոսալ, որ նյութերի առանձնական ճանաչումից հետո էլ չի հաղթահարվել միջնադարյան ավանդույթը և բնագրերը չեն առանձնացվել:

2. Անձնանունների և տեղանունների այլագրութիւնները հրատարակիչը պահպանել է նույնութեամբ, չորովհետև չենք իմացել,— գրում է նա,— թե ո՞րն է հեղինակինը» և որ դրանք սկարող էին նույնութեամբ քաղված լինել «Սերեոսի Պատմութեան» մեջ օգտագործված աղբյուրներից և տարբերվել հեղինակի գործածած սեփական ձևերից» (էջ 8): Ընդհանուր առմամբ այս պատճառաբանութիւնը ընդունելի է և իրավացի, բայց միայն այն դեպքում, երբ ձեռքի տակ չունենք հրատարակվող երկին համաժամանակյա վստահելի այլ աղբյուր, որից կարելի լիներ VII դարի ստույգ ձևը մակաբերել: «Սերեոսի Պատմութեան» մեջ Կոմիտաս կաթողիկոսը հիշվում է մերթ Կոմիտաս (էջ 116, 129), մերթ՝ Կոմիտաս (էջ 112, 118, 121, 150) ձևով, մինչդեռ կարելի է վստահութեամբ ասել, թե VII դարում գործածականն ու ճիշտը Կոմիտասն էր, որովհետև Հոփսիսիմեի տաճարի վրա ունենք նրա թողած շինարարական երկու արձանագրութիւն, երկուսի մեջ էլ գրված Կոմիտաս: Հազիվ թե կարելի լինի որևէ աղբյուրով ապացուցել, թե նույն VII դարում և նրանից առաջ կարող էինք Դրլին ընթերցում ունենալ, ուրեմն նախընտրելին Դրլին է, և նման սրբագրութիւնը ամենևին բնագրի միջամտութիւն չէր նշանակի, մանավանդ որ՝ տողատակին պահվում է ձեռագրի ավանդած անվանաձևը:

3. Գ. Արզարյանի հրատարակած բնագրի, ինչպես արդեն ասվեց, առավելութիւններից մեկն էլ իմաստի հստակութեան ձգտումն է՝ կատարվող սրբագրութիւնների, ծանոթագրութիւնների ու տրոհութեան նշանների գործածութեան միջոցով: Սակայն կարելի է ցույց տալ առանձին դեպքեր, երբ նա ձեռնույս է մտնում սկսած միջամտութիւնը շարունակելուց: Այսպես, օրինակ, Լէ գլխում (էջ 121) կարդում ենք. «Արդ՝ մինչդեռ քակէին զորմն մատրանն՝ երևեցաւ յանկարծակի լուսաւոր և շքնաղագիւտ արքունական մարգարիտն, այսինքն կուսական մարմին սրբոյ տիկնոջ Հոփսիմէի: Եւ քանզի

անդամ անդամ յաւելեցին զնա, յաւելալ ի միմեանց. եւ կնքեալ մատանեալ սրբոյն Գրիգորի և մատանեալ երանելւոյն Սահակայ Հայոց կաթողիկոսի, զոր նա ոչ համարձակեցաւ բանալ: Եւ կնքեալ իւրով ևս մատենեալ, որ արժանի իսկ էր կնքել զայսպիսի մարգարիտ երից հաւատարմաց երրորդ մատենեալք: Դժվար չէ նկատել, որ վերջին նախադասութիւնը (Եւ կնքեալ իւրով ևս մատանեալ, որ արժանի իսկ էր կնքել զայսպիսի մարգարիտ երից հաւատարմաց երրորդ մատենեալք) ավարտված չէ. մասնավորապես շկա ստորոգյալը, որ իմացվեր, թե կնքելով («կնքեալ») ի՞նչ արեց՝ թողեց տեղում, նոր տապանի մեջ դրեց և այլն: Եթե շենք ուզում ստորոգյալ գտնել և միջամտել բնագրին, ապա հարկադրված պիտի լինենք «կնքեալ»-ը սրբագրել «կնքեաց», որով նախադասութիւնը ավարտուն կդառնա: Այս նույն պարբերութեան մեջ մեզ ավելորդ է թվում «մատանեալ» բառի երկրորդ կրկնութիւնը (Եւ կնքեալ մատանեալ սրբոյն Գրիգորի և մատանեալ երանելւոյն Սահակայ...), թեև նման կրկնութիւնները գրաբարյան բնագրերում սակավագեպ շենք: Կարծում ենք՝ VII դարի տեքստում մինչդեռ, այսինքն բառերի միասին դրութիւնը արդարացված չէ և այդպես վարվելու դեպքում միասին պիտի գրենք նաև այն ինչ, դեռ ևս և նման այլ միավորներ: Սրբագրելիքներ կան այդ նույն պարբերութեան կետադրութեան մեջ ևս: Այսպես, «Եւ քանզի անդամ անդամ յաւելեցին զնա, յաւելալ ի միմեանց. եւ կնքեալ մատանեալ սրբոյն Գրիգորի...» հատվածում ստորակետի փոխարեն նախընտրելի էր ըստ գործածել, իսկ միջակետը փոխարինել ստորակետով: Կարծում ենք նաև, որ հիշյալ հատվածը կարիք ունի աղբյուրագիտական ծանոթագրութեան, ուր կասվեր, թե պատմիչը քաղում է կատարում Ազաթանգեղոսից (կամ անկախացած վկայաբանութիւնից), որի մոտ ասված է՝ «Ապա անդամ անդամ յօշէին զնա» (§ 198):

«Սերբոսի Պատմութեան» մեջ բերվող Դավանութեան թղթում Թեոփիլեն կոչված է «ճարտարապետ» (էջ 158), և հրատարակիչը նկատել է այդ տերմինի անհարիրութիւնը՝ հատուկ ծանոթութիւն տալով (էջ 333, ծան. 574): Նա ունի ճարտարապետին փոխարինող հայրապետ ընթերցում և «այս ընդօրինակութեան հիման վրա կարելի կլինի «ճարտարապետ» բառը սրբագրել «հայրապետ» բառով, եթե համոզված լինեինք, որ Դավանութեան թղթի հեղինակները Թեոփիլին փոխաբերական մտքով կամ մեծարելու համար ե՛կոչել «մեծ ճարտարապետ», որը կնշանակար մեծ վարպետ, եկեղեցու (եկեղեցական գործերի) շինութեան մեծ

ճարտարապետ»: Նախ, ծանոթութեան մեջ, ինչպես երևում է, վրիպակ կա՝ «համար են կոչել»-ը պիտի լինի «համար շեն կոչել», այլապէս ծանոթագրութեան անհրաժեշտութիւնը չէր լինի: Ապա՝ «ճարտարապետը» գուտ տեխնիկական տերմին է, ուստի դժվար է այն փոխաբերական մտքով գործածել, մանավանդ որ նրան հաջորդող արուեստաւորը ևս փոխաբերութիւն չէ և ն. Ադոնցի ճշգրտմամբ գիտական է նշանակում (տե՛ս ծան. 575): Արդ, Գ. Արգարյանը ճիշտ է արել, որ «ճարտարապետը» «հայրապետով» չի փոխարինել (դրանք որևէ հիմքի վրա շփոթվել չէին կարող) և ավելի ճիշտ կաներ, եթե բուն տեքստում կամ տողատակին անհարիրութիւնը մատնացուցող նշան գործածեր (թեկուզ՝ sic): Հիշենք նաև, որ Թեոփիլեն հայրապետ չի եղել, այլ՝ «էր ոմն ի պատուականաց» (Բառարան սր. Գրոց, 4. Պոլիս, 1881, էջ 219-220, հմմտ. Enc. Dict. of the Bible, London, 1963, p. 2436): Մենք չգիտենք՝ Գ. Արգարյանը ինչ աղբյուր ունի գրելու, թե «Թեոփիլէն քրիստոնեական եկեղեցու ամենանշանավոր հայրապետներից է» (էջ 333, ծան. 574): Ինչ վերաբերում է աղավաղութեանը, ապա, կարծում ենք, այստեղ սկզբնապես պիտի ունենայինք ճարտարապետ, որը գրական հիմքի վրա կարդացվելու ընդօրինակվել է ճարտարապետ: Որ նման շփոթը իրական է ու նույնիսկ հաճախագեպ, կարելի է օրինակաբար նախ «Մակարայեցի մանկանց» վկայաբանութեան հայերենից կատարված ին վրացերեն թարգմանութեան բնագրի իրողութեամբ: Ի դեպ, նույն «...ի քաջէն Թեոփիլէ ի մեծ ճարտարապետէն սկսեալ...» հատվածում Թեոփիլեն պիտի բացառական հոլովի ցուցիչ ունենար և հաջորդ արտահայտութեանից բուժով անջատվեր. «...ի քաջէն Թեոփիլէ [է]՝ ի մեծ ճարտարապետէն սկսեալ...»: Գուցե արժեք նշել, որ «Սերբոսի Պատմութեան» հեղինակը կրկնում է նոր կտակարանի հայ թարգմանիչների վրապումը: Թեոփիլէն հունարենի կոչական հոլովածն է (Θεοφιλης), ուղղականը կլինի Թեոփիլիս (Θεοφιλιος), մինչդեռ թարգմանիչները պահել են անփոփոխ (Ղուկ. Ա, 3, Գործք. Ա, 1). որին հետևել է և մեր պատմիչը կամ նրա աղբյուրը:

4. «Սերբոսի Պատմութեան» ծանոթագրութիւնները այնքան ժամանակ պիտի ուղեկցեն բնագրին, քանի դեռ չի հայտնաբերվի այդ երկի հնագույն և վստահելի մի գրագիր: Բայց եթե անգամ նրանք հիշյալ պարագայում կորցնեն իրենց բնագրագիտական նշանակութիւնը. ապա կշարունակեն ապրել որպես զանազան բանասիրական խնդիրների ամփոփ ուսումնասիրութիւններ: Սակայն, ի սեր արդարութեան, պիտի ասենք, որ Ծանոթագրութիւններում էլ կան

սրբագրելի տեղիներ, և տարօրինակ կլինեն, եթե դրանք իսպառ բացակայեին:

Հակառակ բնագրագիտական ծանոթագրությունների առատության ու մանրակրկիտության, Գ. Արզարյանը գրեթե չի ջանացել այսօր գիտությանը հայտնի հայկական և օտար աղբյուրների համադրությամբ ստուգել «Սերեոսի Պատմության» հաղորդումները պատմվող իրադարձությունների վերաբերյալ, այդ պատճառով էլ չի ուրվագծվել պատմիչի աշխարհայացքը: Նույնը պիտի ասել այդ իրադարձությունների ժամանակագրության մասին: Պատմիչը երբեմն գոհանում է «յայնմ ժամանակի», «յայնժամ» և նման այլ արտահայտություններով, որոնք հեշտությամբ կարող էին այլ տվյալների հիմամբ ստուգված ժամանակագրության վերածվել: Նույնիսկ Հոսիսիմեի և Զվարթնոց տաճարի շինության թվականն ու շինարարական արձանագրությունների գոյության փաստը ծանոթագրություններում չի արձանագրվում, և եթե Զվարթնոցի կապակցությամբ որոշ գրականություն հղվում է, ապա Հոսիսիմեի տաճարը թողած է անորոշության:

Առանձին սրբագրելիքների առկայությունը ցույց տալու համար բերենք մի քանի օրինակ-սխուզակ» բառին հատուկ ծանոթագրություն է հատկացված (ծան. 1), բայց չգիտես ինչու ասելիքն այստեղ չի ավարտված և միայն հաջորդ ծանոթագրությունից ենք տեղեկանում, որ Գր. Խալաթյանցը ևս ճիշտ է թարգմանել այդ բառը: Ի դեպ, վերջին տարիներս այդ տերմինին անդրադառնալու առիթ ունեցան ուրիշները ևս, և Գ. Արզարյանն էլ արձագանքել է այլուր, ուրեմն կարելի էր հղել:

Պարսկերենից փոխառյալ «պէշոպա» տերմինը մեր մատենագրության մեջ մեկ անգամ է միայն գործածված՝ «Սերեոսի Պատմության» մեջ և ճիշտ է ստոգարանվել Ք. Պատկանյանի կողմից: Գ. Արզարյանը հակված է այն «առա-

ջատար ղորք» թարգմանել (էջ 293, ծան. 435), սակայն ընտանի ձևը «առաջապահ ղորք»-ն է: Ի տարբերություն նախորդ հրատարակիչների, Գ. Արզարյանը «Արևմտից ծովը» դիտում է իրրև հատուկ անուն (էջ 306, ծան. 478), բայց չի փորձում մասնավորեցնել, թե VII դարի հեղինակը մեր ճանաչած ո՞ր ծովը նկատի ունի (Միջերկրական): Չեռադրերի ու նախորդ հրատարակությունների «քաջ արանց արքայ Կոստանդին» արտահայտության «արանց»-ը այժմ սրբագրված է «յարանց», այսինքն՝ «տղամարդկանց մեջ քաջ, ընտիր տղամարդ» (էջ 339, ծան. 590): Մեկնարանությունը ճիշտ չէ. հայերենում «քաջ արանց արքայ» արտահայտությունը բանաձևային դործածություն ունի. Խորենացու մոտ, օրինակ, կարդում ենք՝ «քաջ արանց Խոսրով Հայոց արքա» (էջ 318), որ ամենևին սրբագրության ենթակա չէ: Համոզված չենք նաև, թե Բաջր հունարենում անպայման αἰθερος-ով կարտահայտվեր, քանի որ VII դարի աղբյուրներում այդ բառի դիմաց («Գիրք թղթոց») «լաւ» տերմինն է գործածվում, իսկ հայերեն քաջի համարժեքը կարող էր և γρᾶτιστος-ը լինել (այդպես է, օրինակ, մեզ արդեն ծանոթ Թեոփիլէին վերաբերող ավետարանական տեքստում— γρᾶτιστε Θεοφιλε — [ո՞վ] քաջդ Թէոփիլէ):

Այս բոլոր դիտողությունները մանրուքներ են այն աշխատանքի դիմաց, որ գիտնականին վայել խնամքով, նվիրումով, անդադրությամբ ու հմտությամբ կատարել է բանասիրական գիտությունների գովտոր Գևորգ Արզարյանը, միաժամանակ ունենալով իր կատարածին արժանի խմբագիր, որ է՝ հայագետ-արևելագետ Գագիկ Սարգսյանը:

Ռանասիր. գիտ. րեկնածու Պ. Մ. ՄՈՒՐԱՒՅԱՆ

«ԲԺՇԿԱՐԱՆ ՁԻՈՅ ԵՎ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԳՐԱՍՏՆՈՅ» (ԺԳ ԳԱՐ), աշխատասիրութեամբ Բ. Լ. Չուգասբյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1980, 273 էջ:

Միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրությունը միշտ էլ եղել է սովետահայ բանասիրության ուշադրության կենտրոնում: Վերջին տասնամյակներում լույս են տեսել մի շարք արժեքավոր աշխատություններ, որոնք պատմագիտության և բանասիրության մարզում մինչ այժմ եղած նվաճումների հիման վրա կատարված ուսումնասիրություններ են, ինչպես նաև գրավոր նոր աղբյուրների բնական-համեմատական

բնագրերի հրատարակման հետ կապված երախտարեր հետազոտություններ:

Այդ բնույթի հետազոտություններից է նաև XIII դարում զարգացման լայն հունի մեջ դրված գործնական գիտությունների ճյուղերից մեկի՝ անասնաբուժության (կոնկրետ անվանումով՝ ձիաբուժության և ձիաբուժության), իրոք, «նյութով ու գրությամբ պատվական» եզակի ձեռագրի հրատարակությունը: Սույն